

**ՓՈՐՁՈՒԹԻՒՆԸ ԿԸ
ԴԻՄԱԿԱԶԵՐԾԷՆ ՄԱՐԴԸ**

Կասկած է վեր է, որ փորձուքինն ու դժուարին պահերն են, որ մեր իսկական նկարագիրն ու հասարակը հանդես կը բերեն: Առհասարակ բոլորը կը ջանան խաղաղասեր ձեւանայ, որպէսզի ծածկեն իրենց իրական նկարագիրը: Խռովիչ պահան դիմաց աշխարհի մարդը սակայն չի կրնար իր խաղաղութիւնը պահել: Փորձութիւնը կը դիմակազերծէ զայն: Բայց տարբեր է վերածնած քրիստոնեայ մարդուն պարագան, որ իր կեանքին մէջ ընդունած է խաղաղութեան Իշխանը՝ Քրիստոս: Ան կեանքի փոթորիկներուն դիմաց կրնայ պահել իր հանդարտութիւնը, իր խաղաղութիւնը, իր գեղեցկութիւնը, ճիշդ այնպէս՝ ինչպէս աստղը իր խաղաղութիւնն ու գեղեցկութիւնը կը պահէ ամպրոպներու մէջ:

ՄԻՇՏ ԱՂՕԹԵՆՔ

Տէ՛ր, մօտդ կանչէ՛ մեղանշած անձս, որովհետեւ չեմ համարձակիր մերձենալ քեզի, կը պատկառիմ անօթէն եւ զարիւրիմ իմ գործերէս: Համարձակութիւն չունիմ Քու առջեդ, որովհետեւ ինքզինքս կորուստի մատնած եմ: Հեռացայ Քու սուրբ պատուիրաններէդ եւ մերկացայ Քու փառքէդ, բայց Դո՛ւն, Տէ՛ր, զքա՛ եւ ողորմէ՛ ինձի, որովհետեւ Քու անարատ ձեռքերուդ ստեղծածն եմ: Եփրեմ Ասորի

**ԵՔԷ Կ՛ՈՒԶԵՍ ԳԻՏՆԱԼ ԹԷ
ԻՆՉՊԷՍ ՊԻՏԻ ՅԱՅՏՆՈՒԻ ԱՍՏՈՒԾՈՅ
ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ, ԿԱՐԴԱ՛ Սաղմոս 9**

Ամբողջ սրտովս գոհութիւն պիտի մատուցանեմ քեզի, Տէ՛ր, եւ քու բոլոր սխալի գործերդ պիտի թուեմ: Քեզմով պիտի ուրախանամ ու ցնծամ, եւ ներբողեմ քու անունդ, ո՛վ Բարձեալ :

Թշնամիներս նահանջի քամբան բռնցիկն, քու դիմացդ տապալեցան ուկորուստի մատնուեցան, որովհետեւ դուն, Ո՛վ արդար Դատաւոր, քու գահիդ բազմած՝ իմ դատս եւ իրաւունքս պաշտպանեցիր: Հեթանոսները յանդիմանեցիր, ամբարիշտները կորուստի մատնեցիր եւ անոնց անունը յաւէտ ջնջեցիր: Թշնամին ընդմիշտ խորտակուեցաւ, անոնց քաղաքները հիմնահատակ կործանեցիր, եւ անոնց յիշատակն անգամ կորուսեցաւ: Բայց Տէ՛ր կայ ու կը մնայ յաւիտեան: Ան Իր աթոռը նստաւ եւ պատրաստ է դատաստանի:

Արդարութեամբ պիտի դատէ աշխարհը եւ ուղիղ դատաստան պիտի ընէ ժողովուրդներուն: Տէ՛ր ինձ ապաւեն պիտի ըլլայ անիրաւուածիմ, ապաստան պիտի ըլլայ նեղութեան ժամանակներուն: Անոնք որ քեզ կը ցնջան, ո՛վ Տէ՛ր, քեզի պիտի վստահիմ, որովհետեւ դուն չե՛ս լքեր անոնք որոնք քեզի՛ պիտի կը դիմեն: Ներբող երգեցէ՛ք Տիրոջը, որ Սիոն կը բնակի, բոլոր ազգերուն մէջ պատմեցէ՛ք անոր գործերը: որովհետեւ ան՝ որ բոլոր ռեկրներուն համար հաշիւ կը պահանջէ՛ յիշեց տառապողները, չմոռցաւ անոնց աղաղակը:

Սիրելի ընթերցող, ճՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նստե՛ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,
P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak Ծրագր թերթ



ԲՈՒ ԽՍՐԷՂ ԽՍ ՌՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍԿ.119-105)

ԺԳ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ , 17 ՄԱՅԻՍ 2020 ԹԻՒ 20

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇԱՀՎԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
Գործք 20.17-38: Ա. Յով. 3.2-6
ՅԻՍՈՒՄ ԲՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 9.39-10.10

**ՅԻՍՈՒՄ ԲՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ
9.39- 10.10**

Յիսուս ըսաւ. *«Աշխարհ եկայ յայտնելու, թէ որո՞նք են կոյրերը եւ որոնք՝ տեսնողները. որպէսզի կոյրերը տեսնեն եւ անոնք որ կը տեսնեն՝ կուրման»*

Փարիսեցիներէն ոմանք, որոնք իր շուրջն էին, լսեցին ասիկա եւ հարցուցին. *«Արդեօք մե՞նք ալ կոյր ենք»:*

Յիսուս անոնց պատասխանեց. *«Եթէ կոյր ըլլայիք, մեղք պիտի չունենայիք, բայց քանի կըսէք թէ կը տեսնէք, կը նշանակէ՝ թէ ձեր մեղաւոր ըլլալը կը հաստատէք: Հաստատ գիտցէ՛ք, ան որ ոչխարներուն փարսխը դռնէն չի մտներ, այլ ուրիշ տեղէ կը մագլցի, անիկա գող է եւ աւազակ. իսկ ան, որ դռնէն կը մտնէ՝ անիկա ոչխարներուն հովին է: Դռնապանը դուրը կը բանայ անոր եւ ոչխարները իր ձայնին կը հետեւին: Իրենց անուններով կը կանչէ իր ոչխարները եւ դուրս կը տանի զանոնք: Եւ երբ իր ոչխարները դուրս կը հանէ, ի՞նք կ'առաջնորդէ եւ ոչխարները կը հետեւին իրեն, որովհետեւ իր ձայնը կը ճանչնան: Օտարին չեն հետեւիր. ընդհակառակը, կը փախչին անկէ, որովհետեւ օտարներու ձայնը չեն ճանչնար»:*

Յիսուս այս առակը խօսեցաւ անոնց, սակայն անոնք չհասկցան թէ ի՞նչ ըսել կ'ուզէր իրենց: Ուստի Յիսուս կրկին ըսաւ անոնց. *«Հաստատ գիտցէ՛ք, թէ ե՛ս եմ ոչխարներուն դուրը: Բոլոր անոնք, որոնք ինձմէ առաջ եկան, գող էին եւ աւազակ. բայց ոչխարները անոնց չհետեւեցան: Ես եմ դուրը. ով որ ինձմէ անցնելով ներս մտնէ՝ պիտի փրկուի. պիտի մտնէ եւ ելլէ եւ ճարակ գտնէ: Գողը կու գայ միայն գողնալու, սպաննելու եւ փճացնելու համար: Ես եկայ, որպէսզի կեանք ունենան եւ լեցուն կեանք ունենան»:*

**ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ
20.17-38**

Միշտոսն Առաքյալ յոր դրկեց Եփեսոսս եւ եկեղեցոյ երեցները իր քովը կանչեց: Երբ անոնք եկան, ըսաւ անոնց. «Դուք անձամբ գիտեք, թէ Ասիա գալուստ առաջին օրէն ի վեր ի՛նչպէս վարուեցայ ձեզի հետ, ամբողջ այս ժամանակամիջոցին: Ամենայն խոնարհութեամբ եւ յանախ արցունքով ծառայեցի Աստուծոյ, հրեաներու նիւթածքոյն փորձութիւնները կրելով: Գիտե՛ք թէ բնաւ չհաշուեցայ ձեզմէ, օգտակար բաներու մասին խօսեցայ եւ սորվեցուցի ձեզի, հրապարակաւ ըլլայ թէ տան մէջ: Թէ՛ հրեաներուն եւ թէ՛ հեթանոսներուն տուի նոյն վկայութիւնը եւ պատգամը՝ ապաշխարութեամբ Աստուծոյ դառնալու եւ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հաւատալու:

Հիմա ահաւասիկ Սուրբ Հոգիին մղումով երուսաղէմ կ'երթամ: Ձեւ գիտեք, թէ հոն ի՛նչ պիտի պատահի ինծի: Միայն գիտե՛մ, թէ ամէն մէկ բաղաճի մէջ Սուրբ Հոգին կ'ազդարարէ ինծի՝ ըսելով թէ բանտարկութիւն եւ նեղութիւն կը սպասեն ինծի: Բայց հոգս չէ ինծի համար կարեւորը կեանքս չէ, այլ կ'ուզեմ ուրախութեամբ իր վախճանին հասցնել սկսած գործս, այն պաշտօնը, որ Տէր Յիսուս տուաւ ինծի՝ Աստուծոյ շնորհքը աւետարանելու:



**ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԸՆԴՀԱՆՐԱՎԱՍ
ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ
3.1-6**

Տեսէ՛ք, թէ ի՛նչպիսի սիրով Հայրը մեզ սիրեց ուզելով, որ Աստուծոյ որդիներ կոչուինք, եւ արդարեւ Աստուծոյ որդիներն ենք: Աշխարհը մեզ չի փանջար, որովհետեւ չեմանցաւ զայն:

Սիրելիներ, այժմ Աստուծոյ որդիներ ենք: Թէ ի՛նչպէս պիտի ըլլանք յետոյ՝ չենք գիտեր տակաւին, բայց գիտենք, թէ երբ Քրիստոս յայտնուի իրեն նման պիտի ըլլանք, որովհետեւ զինք պիտի տեսնենք իր իսկութեան մէջ: Ով որ այս յոյսը ունի՝ ինքզինք կը մաքրէ, ինչպէս որ Քրիստոս ինք մաքուր է:

Ով որ կը մեղանչէ՝ Աստուծոյ օրէնքը կը խախտէ, եւ մեղքը ինքնին օրէնքին խախտումն է: Գիտե՛ք, թէ Քրիստոս յայտնուեցաւ մեր մեղքերը ջնջելու համար, եւ թէ իր մէջ մեղք չկայ: Ով որ Քրիստոսի միացած կը մնայ՝ չի մեղանչեր, իսկ ով որ կը մեղանչէ՝ զայն երբեք տեսած ու փանջած չէ:

**ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ
ՀԱՄԱՐՁՈՒՄ**

Քրիստոս իր հրաշափառ յարուսեցնէն 40 օր ետք երեւցաւ իր աշակերտներուն, անոնց հետ խօսելով Աստուծոյ արքայութեան մասին:

Քառասուններորդ օրը Յիսուս պատուիրեց աշակերտներուն Երուսաղէմ մնալ մինչեւ Պենտեկոստէի օրը, երբ Ս. Հոգին պիտի իջնէ երկինքէն եւ բնակի անոնց մէջ:

Այնուհետեւ իր աշակերտներուն հետ Քրիստոս Զիթենեաց լեռը բարձրացաւ, ուր օրհնեց զանոնք: Եւ երբ կ'օրհնէր երկինք բարձրացաւ բոլորին աչքին առջեւ: Երբ տակաւին առաքելները իրենց աչքերը երկինք յարած՝ Յիսուսի մեկնիլը կը դիտէին, ահա երկու սպիտակազգեստ մարդիկ երեւցան անոնց եւ ըսին.

—Ո՛վ Գալիլիացիներ, ինչո՞ւ կեցեր երկինքը կը դիտէք: Այս Յիսուսը, որ երկինք համբարձաւ, օր մը դարձեալ պիտի գայ այնպէս՝ ինչպէս անոր երկինք երթալը տեսաք:

Քրիստոս համբարձաւ, որպէսզի երկինքը երկրին միաւորէ եւ աստուածացնէ ու փառաւորէ մարդկային բնութիւնը:

Ան երկինք ելաւ եւ նստաւ Հօրը աջ կողմը առանց լքելու իր սիրելի առաքելները եւ բոլոր անոնք, որոնք կը հաւատան եւ կը սիրեն զինք:

Յիսուս ըսաւ.

«Ես ձեզի հետ եմ, մինչեւ աշխարհի վերջը»:

**ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ
ԽՐԱՏՆԵՐԸ**

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Եթէ մեղքերուդ համար թողութիւն կ'ուզես, հրաւիրէ որքերը, այրիները, վշտահարները, տառապածները, դժբախտները, անդամալոյծները, կոյրերը, կաղերը, կարիքաւորները, բանտարկեալները, բոլոր անօթիները եւ անմխիթարները: Միխիթարէ՛, սփոփէ՛ եւ կերակրէ՛ զանոնք: Միայն անոնց ծառայէ, անոնց շո՛ւրջ դարձի՛ր, ուրախացո՛ւր եւ պատուէ՛ զանոնք՝ քաղցր խօսքերով, որպէսզի մեղքերուդ թողութիւն եւ տանդ փրկութիւն ստանաս: Այսպէս կազմակերպէ՛ քու ընդունելութեանդ հրաւերները եւ աղփատներուն ու թշուառներուն հրաւերին մէջ հարուստները եւ բարձր դասակարգը նկատի մի՛ ունենար, որպէսզի անոնք, (աղփատները) նախագահեն ու անոնք ըլլան առաջինները: Անոնք թող նստին սեղանին վերը եւ վարը. միայն զանոնք ներս հրաւիրէ աղաչանքով եւ ֆամբո՛ւ դիր աղերսանքով: Եթէ այսպէս հիւրընկալես, ոչ թէ տուած՝ այլ առած կ'ըլլաս, ոչ թէ ծախած՝ այլ մեծ շահ մը ապահոված ու նաեւ թողութիւն ստացած կ'ըլլաս: Ասոր համար էր որ Քրիստոս կ'ըսէ. «Երբ հրաւեր կու տաս, հարուստները մի՛ կանչեր» որպէսզի անոնց տրուած ուշադրութեան պատճառաւ աղփատները արիւմարիւած չզգան եւ դուն, քու կողմնակալութեանդ պատճառաւ չդատապարտուիս, որպէս օրինակաց մը նման անոր, որ կ'ըսէ. «Ան որ գեղեցիկ հագուստներ հագած է, պէտք է անոր ըսէ՛. պատիւ ըրէ՛, այստեղ նստէ՛» իսկ աղփատներուն պիտի ըսէ՛. «Գնա՛ եւ սանդիսամատին ծայրը նստէ՛» ու այդպէս ընելով չար մտածումներու դատաւոր պիտի դառնաք, որովհետեւ հարուստները ընդունելով մեղք կը գործէք եւ դուք իբրեւ օրինակացներ կը մեղադրուիք օրէնքով:

Յովհան Մանդակունի ձառեր